ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

**«----» սեպտեմբերի 2011թ.** **N_____-Ա**

## ՈՐՈՇՈՒՄ

## ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով 2011 թվականի օգոստոսի 17-ին «Էլիտ Գրուպ» փակ բաժնետիրական ընկերության և Երևան համայնքի միջև կնքված անշարժ գույքի նվիրատվության մասին N5310 և N5311 պայմանագրերը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով՝

**Երևան քաղաքի ավագանին** ***որոշում է.***

1. Որպես նվիրատվություն ընդունել «Էլիտ Գրուպ» փակ բաժնետիրական ընկերության սեփականությունը հանդիսացող Երևան քաղաքի Մամիկոնյանց 41 հասցեում գտնվող բազմաբնակարան շենքի 3-րդ հարկի 122.5քմ մակերեսով N6 և 69.8քմ մակերեսով N10 բնակարանները:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ** **Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

2011 թվականի օգոստոսի 17-ին «Էլիտ Գրուպ» փակ բաժնետիրական ընկերության և Երևան համայնքի միջև կնքված անշարժ գույքի նվիրատվության մասին N 5310 և N 5311 պայմանագրերի համաձայն՝ «Էլիտ Գրուպ» փակ բաժնետիրական ընկերության սեփականությունը հանդիսացող՝ Երևան քաղաքի Մամիկոնյանց 41 հասցեում գտնվող բազմաբնակարան շենքի 3-րդ հարկի 122.5քմ մակերեսով N6 և 69.8քմ մակերեսով N10 բնակարանները նվիրվել են Երևանի քաղաքային համայնքին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 597-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նվիրառուն իրավունք ունի մինչև նվերն իրեն հանձնելը ցանկացած պահի հրաժարվել դրանից: Այդ դեպքում նվիրատվության պայմանագիրը համարվում է լուծված: Ուստի անհրաժեշտություն է առաջացել կայացնել որոշում՝ նվերներն ընդունելու մասին:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Գույք ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Գույք ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ